

ԱՒԵՏԱԲԵՐ

Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

19 փետրուար 2017

ԺՁ. Տարի

Թիւ 9

Բ. ԿԻՐԱԿԻ ԱՌԱՋԱԻՈՐԻ (ճաշոց էջ 107)



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծո՛յ Խօսք, եւ անմահ՝ Էութիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Զօր եւ Զոգւոյն հետ փրկէ՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԴՁ.

Քրիստոս թագաւոր, Զօր եւ Զոգւոյն Էակից, որ մեզի համար մարմնացար սուրբ Կոյսէն, փառքի թագաւոր Քրիստոս, փառք Քեզի:

Որ կամաւոր մահով մահը խորտակեցիր եւ անապական յարութեամբդ աշխարհը նորոգեցիր, փառքի թագաւոր Քրիստոս, փառք Քեզի:

Որ Քու կենարար արիւնովդ լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին, հրեշտակներուն հետ Քեզի կ'երգենք ըսելով՝ փառքի թագաւոր Քրիստոս, փառք Քեզի:

ՄԵՍԵՐԻ (Սղմ. 64, 2 եւ 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր Էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԵՐԵՅՆԵՐՈՒ ՅԱՍԱՏՈՒԹԻՒՆԸ

Պօղոս Առաքեալին Տիտոսի ուղղած Թուղթէն Է ընթերցուածը.
(Տիտ. 1, 1-11)

Պօղոս, ծառայ Աստուծոյ եւ առաքեալ Յիսուս Զրիստոսի, առաջնորդելու համար ընտրեալները դէպի հաւատքը եւ ճշմարտութեան գիտութիւնը, որ տրուած է աստուածապաշտութեամբ եւ յոյսով յաւիտենական կեանքի, զոր անսուտն Աստուած ի յաւիտենից խոստացաւ եւ որոշեալ ժամանակին յայտնեց քարոզութեամբ իր խօսքին, որուն եւ հաւատարիմ եղայ, Աստուծոյ մեր Փրկչին հրամանով. Տիտոսի, սիրելի որդիս, մեր հասարակաց հաւատքին միութեան մէջ՝ շնորիք եւ խաղաղութիւն Յօր Աստուծոյ եւ Յիսուս Զրիստոսի, Փրկչին կողմէ: Թողուցի քեզ Կրեւտէ, որպէսզի լրացնես ինչ որ կը պակսի եւ ամէն քաղաքի համար երեցներ կարգես՝ տուած հրահանգներու համաձայն: Իւրաքանչիւր թեկնածու պէտք է ըլլայ անբասիր, մէկ անգամ ամուսնացած, ունենայ հաւատացեալ զաւակներ, որոնք ամբաստանութեան տակ չըլլան իբրեւ անառակներ կամ ըմբոստներ: Որովհետեւ Եպիսկոպոսը իբրեւ Աստուծոյ Տան տնտես՝ պէտք է ըլլայ անարատ, ո՛չ յանդուգն եւ ո՛չ բարկացող, ո՛չ արբեցող եւ ո՛չ կռուասէր, ո՛չ ազահ եւ ո՛չ անպարկեշտ, այլ ընդհակառակն՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, աստ-



ուածապաշտ, ժուժկալ, վերակացու ըլլայ, հաւատարիմ խօսքին, վարդապետութեան, որպէսզի կարող ըլլայ խրատել ողջամիտ վարդապետութեամբ եւ հակառակորդները կշտամբել:

Արդարեւ, բազմաթիւ են ըմբոստ մտքերը, սևամիտ ճառախօսները, մոլորեցուցիչները, մանաւանդ հրեաներէն: Պէտք է ըմբերանես զանոնք: Ասոնք ընտանիքները կը վրդովեն եւ գծուծ եւ ստորին շահերու համար կը սորվեցնեն ինչ որ վայել չէ:

Ալելուիա, Ալելուիա,

Տէ՛ր, քու երկրիդ հանդէպ դուն սեր ցոյց տուիր եւ Յակոբի ազգը գերութենէ վերադարձուցիր:

(Սղմ. 84, 42)

Ալելուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ (Յովհ. 6, 59-72)

Մեր Տեր Յիսուս Զրիստոս

այսպէս խօսեցաւ եւ սորվեցուց Կափառնաումի ժողովարանին մէջ: Աշակերտներէն շատեր, զինք լսելէ ետք, ըսին. «Խիստ են այս խօսքերը, ո՞վ կարող է զանոնք տանիլ»: Յիսուս գիտնալով, թէ անոնք կը տրտնջե-



ին, ըսաւ. «Ասիկա կը գայթակղեցնե՞՞ծե՞ք: Իսկ երբ տեսնէք Մարդու Որդիին վերանալը, հոն ուր եր նախապէս...: Հոգին է կեանք տուողը, իսկ մարմինը՝ անօգուտ է: Խօսքերը, զորս ըսի ձեզի, հոգի են եւ կեանք: Սակայն ձեզմէ ոմանք չեն հաւատար»: Յիսուս սկիզբէն գիտեր անոնք, որոնք չէին հաւատար եւ թէ ո՞վ պիտի մատներ զինք եւ աւելցուց. «Ասոր համար ըսի ձեզի, թէ ոչ ոք կրնայ ինծի գալ եթէ չտրուի անոր Հօրմէս»: Այնուհետեւ աշակերտներէն շատեր քաշուեցան

եւ ա՛լ հետը չէին շրջեր:

Յիսուս ըսաւ տասներկուքին. «Դո՞ւք ալ կ'ուզէք մեկնիլ»: Սիմոն Պետրոս պատասխանեց. «Տէ՛ր, որո՞նք երթանք: Դուն յաւիտենական կեանքի խօսքերն ունիս: Մենք հաւատացինք եւ գիտցանք, թէ դուն Աստուծոյ Սուրբն ես»: Յիսուս պատասխանեց. «Ես չընտրեցի՞ ձեզ, Տասըներկուքդ, եւ սակայն ձեզմէ մէկը սատանայ է»: Ան կ'ականարկեր Յուդայի, Սիմոն Իսկարիովտացիի որդիին, որ պիտի մատներ զինք եւ մէկն էր Տասներկուքէն:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

«Յաւիտենական կեանքի խօսքեր»

Սիրելի հաւատացեալ,
Այսօրուան աւետարանը մեր աչքերը կը բանայ յատուկ իրականութեան մը դիմաց, ուր կը լսենք եւ կ'ապրինք կեանքին իմաստը Տիրոջ այս խօս-

քէն. «Խօսքերը զորս ըսի ձեզի՝ հոգի են եւ կեանք» (Յովհ. 6, 63):

Յիսուսի խօսքերը կեանքի կը կանչեն իւրաքանչիւր անձ որ ականջ ունի, գիտէ մտիկ ընել, զննել, նժարի վրայ

դնել եւ տեսնել խօսքին արժեքը որ կը դպչի հոգիին եւ ծիլ կու տայ, ցոյց տալով հոգւոյն եւ կեանքի անքակտելի կապը:

Ով Սիրելի հաւատացեալ,

Դուն ալ կանչուած ես Պետրոս առաքելի նման ըսելու. «Տէ՛ր, որո՞նս

երթանք: Դուն յաւիտեական կեանքի խօսքերն ունիս» (Յովհ. 6, 68):

Քրիստոսի այս խօսքերը անգամ մը եւս կու գան հաստատելու Իր Սիրոյ դրոշմը, մարդս բարձրացնելու, դարձեալ զետեղելու զինք իր նախկին Եղեմական պարտեզի փառքին մէջ: Ամեն:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հանդիսապետութեամբ՝

Գերապայծառ Յ. Գաբրիէլ Թ.Ծ.Վ. Սուրբատեանի

Պատրիարքական փոխանորդ

Չմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան եւ Պէյրուքի Պատրիարքական թեմի

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՅՈՒՆԷՀԱՆԴԷՍ

Պատգամախօս՝

Մեծայարգ Տիար Կրէկուար Գալուստ Տիտէն Յ.Կ. Մետրոպեան Վարժարանի

Մասնակցութեամբ՝ **Յ.Կ.Յ.Ս-ի Եւ Ս. Խաչ Եկեղեցւոյ Երգչախումբին**

Գեղարուեստական Ղեկավար՝ **Տիկին Սոնա Կիրիւնեան**

Կիրակի, 26 Փետրուար 2017, առաւօտեան ժամը 10.30-ին, Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝

Ամենապատիւ եւ Գերերջանիկ

Տ. Տ. Գրիգոր Պետրոս Ի.

Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

«ՏՕՆԱՀԱՆԴԷՍ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ»

Պատգամախօսութեամբ՝

Մեծարգոյ Տիար Աւետիս Կիտանեանի՝

Լիբանանի Զբօսաշրջութեան Նախարար

Մասնակցութեամբ՝ **Արծիւեան ու Բլբուլ Երգչախումբերուն՝**

Ղեկավարութեամբ՝ **Պրն. Մանուէլ Քէշիշեանի**

Զորեքշաբթի, 22 Փետրուար 2017, երեկոյեան ժամը 8:00-ին,
«Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահին մէջ, Պուրճ Համուտ:

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org